

ՕՏՎԵՅԻՆ ՍՊԻՏԱԿԻ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԸ

Օգոստոսի 10-ին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Ս. Ներսես արքեպս. Պողոսյանը, ուղեկցությամբ Ս. Գալակզուն ժ. վրդ. Նաճարյանի և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբանների, մեկնեց Սպիտակ՝ կատարելու Աբ. Գարություն Նորակառույց եկեղեցու գմբեթի և զանգակատան խաչերի օծումը:

Եկեղեցու մոտ Տեղապահ Սրբազանին դիմավորեցին Գուգարաց թեմի առաջնորդ Գերշ. Ս. Սեպուհ եպս. Զուլջյանը, Լոռու մարզպետ Դեմիրիկ Քոչինյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Սղոթքի և շարականների երգեցողությամբ խաչերը նախ լվացվեցին գինիով, ապա Տեղապահ Սրբազանը սրբալույս մյուռոնով օծեց զույգ խաչերի կենտրոնները, աջ և ախյակ կողմերը:

Գալարտ արարողության Սրբազան Գայրն իր օրհնությունը բաշխեց 1988 թ. երկրաշարժի արհավիրքն ապրած սպիտակցիներին՝ ասելով. «Տասը տարիներ առաջ մենք էլ ձեզ հետ արտասվեցինք, մենք էլ ձեզ հետ սև բախտի դեմ ըմբոստացանք և աղոթեցինք, որ Աբ. Գոգին գա մխիթարելու մեզ բոլորիս: Այսօր այդ մխիթարությունը իջավ Սպիտակի ժողովրդի վրա»:

Ըստ ընկալյալ սովորության, օծված խաչերը, որպես սպիտակցու հավատքի «ոգեղեն իրականություն», բարձրացվեցին և տեղադրվեցին Աբ. Գարություն եկեղեցու գմբեթին և զանգակատանը: Խաչերի տեղադրման պատիվը, իբրև շինարարական աշխատանքների վերջակետ, տրվեց եկեղեցու շինարարության ղեկավար Սկրտիչ Լամբարյանին:

Աբ. Գարությունը եկեղեցիների Գամաշխարհային հորհրդի նվերն է աղետյալ սպիտակցիներին, որը կյանքի է կոչվել ճարտարապետ Բաղդասար Արզումանյանի նախագծով:

Սպիտակցիները վկայում են, որ Աբ. Գարություն եկեղեցու տեղում է գտնվել խորհրդային տարիներին հիմնովին ավերված Աբ. Աստվածածին եկեղեցին: Ավերված եկեղեցուց մնացել է միայն երկու քար, որոնք որպես մասունք, առաջնորդ սրբազանի առաջարկով, ագուցվել են Աբ. Գարություն եկեղեցու մուտքի զույգ որմերին:

Մինչև տարեվերջ տեղի կունենա նաև Աբ. Գարություն եկեղեցու օծման արարողությունը: Եվ ինչպես Տեղապահ Սրբազանը մաղթեց՝ «Թող աղոթքի մրմունջը եկեղեցու կամարների տակ երբեք չդադարի»:

ՄԱՍՆՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ